Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՔ ՄՏԵՐՄԻԿ ՇՓՄԱՆ ԵՎ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԿԻ ՄԱՍԻՆ

Կապիկի ծաղիկը վարակիչ հիվանդություն է, որն առաջանում է կապիկի ծաղկի վիրուսից: Ցանկացած անձ, ով կապիկի ծաղկով հիվանդի հետ ունեցել է սերտ, անձնական շփում, վտանգի տակ է:

ԻՆՉՊԵ՞Ս Է ՏԱՐԱԾՎՈՒՄ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿԸ

Հայտնի է, որ կապիկի ծաղիկը տարածվում է կապիկի ծաղիկով հիվանդի հետ սերտ, մտերմիկ (ինտիմ) և/կամ երկարատև շփման միջոցով: Սա ներառում է՝

- Մաշկը մաշկին անմիջական շփում ցանի, վերքերի կամ վերքերի կեղևի հետ սեռական հարաբերության կամ այլ մտերմիկ շփումների ժամանակ: Սա կարող է ներառել համբուրվելը, մերսումը և գրկախառնվելը:
- Շփումը առարկաների և գործվածքների հետ (օրինակ՝ չլվացված հագուստ և անկողնային պարագաներ, ընդհանուր օգտագործման սրբիչներ և սեքս-խաղալիքներ), որոնք օգտագործվել են կապիկի ծաղիկով հիվանդի կողմից և չեն մաքրվել:
- Շփումը շնչառական արտազատուկների հետ: Դա կարող է տեղի ունենալ երկարատև, սերտ, դեմ առ դեմ կամ մտերմիկ (ինտիմ) շփումների ժամանակ, ինչպես օրինակ՝ համբուրվելիս, փաթաթվելիս և սեռական հարաբերություն ունենալիս:

Կապիկի ծաղկով հիվանդ անձը կարող է այն փոխանցել ուրիշներին սկսած այն պահից, երբ ախտանիշները հայտնվում են մինչև երբ ցանն արդեն ապաքինված է, կեղևակալած մաշկն ընկնած է և դրա տակից նոր մաշկ է առաջացել: Սա սովորաբար տևում է 2-ից 4 շաբաթ:

Կապիկի ծաղիկ ունցող հղի անձը այն կարող է փոխանցել իր պտղին ընկերքի միջոցով:

Կապիկի ծաղիկը ՉԻ տարածվում դրանով վարակված անձի հետ սովորական (կարճատև) զրույցի կամ նրա կողքով քայլելու միջոցով:

ԻՆՉՊԵ՞Ս ԽՈՒՍԱՓԵԼ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԿՈՎ ՎԱՐԱԿՎԵԼՈՒՑ

- Խուսափեք մաշկը մաշկին կամ երկարատև սերտ շփումից որևէ մեկի հետ, ով ունի կապիկի ծաղկի ախտանիշներ
- Խուսափեք դիմպչելուց չմաքրված առարկաներին կամ նյութերին, որոնք օգտագործվել են որևէ մեկի կողմից, ով ունի կապիկի ծաղկի ախտանիշներ
- Հաճախ լվացեք ձեռքերը
- Պատվաստվեք, եթե իրավասու եք

ՆՎԱԶԵՑՐԵՔ ՎՏԱՆԳԸ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՏԵՐՄԻԿ ՇՓՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

- Ձեր սեռական զուգընկերոջ (զուգընկերների) հետ խոսեք վերջերս ունեցած ցանկացած հիվանդության և նոր կամ անբացատրելի ցանի/վերքերի մասին, ներառյալ դրանց մասին, որոնք սեռական օրգանների կամ հետանցքի վրա են: Խուսափեք սեռական հարաբերությունից կամ մաշկը մաշկին շփումից, եթե դուք կամ ձեր զուգընկերն ունեք կապիկի ծաղկի ախտանիշներ կամ եթե ձեզ մոտ ախտորոշվել է կապիկի ծաղիկ:
- Օգտագործեք պահպանակ: Հավանաբար, միայն պահպանակները բավարար չեն կապիկի ծաղիկը կանխարգելելու համար: Բայց դրանք կարող են նվազեցնել վտանգը և կարող են օգնել կանխել վերքերի առաջացումը զգայուն հատվածներում, ինչպիսիք են հետանցքը, բերանը կամ սեռական օրգանները:
- Նվազեցրեք ձեր սեռական զուգընկերների թիվը
- Խուսափեք ավելի վտանգավոր գործողություններից, ինչպիսիք են անծանոթների հետ սեռական հարաբերությունը և սեռական նպատակներով խնջույքները:

ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵՔ ՁԵՐ ԲԺՇԿԻ ՀԵՏ անմիջապես, եթե ունեք նոր, անբացատրելի ցան կամ վերքեր մարմնի ցանկացած մասում: Սա հատկապես կարևոր է, եթե շփում եք ունեցել որևէ մեկի հետ, ով ունի կամ կասկած կա, որ ունի կապիկի ծաղիկ:

Սկանավորեք QR ծածկագիրը՝ վայրը գտնելու համար

ԵԹԵ ԲԺԻՇԿ ՉՈՒՆԵՔ՝

- Զանգահարեք Հանրային Առողջության Զանգերի Կենտրոն 1-833-540-0473 համարով (ամեն օր՝ առավոտյան 8-ից երեկոյան 8:30-ը) կամ
- Այցելեք ձեզ մոտիկ Հանրային Առողջության Սեռական Առողջության Կլինիկա:

Կապիկի ծաղկի մասին հավելյալ տեղեկությունների համար այցելեք՝
ph.lacounty.gov/Monkeypox

County of Los Angeles Public Health